community

The New Apostolic Church around the world

03/2017/ AM

Սուրբ Հաղորդության տոնակատարություն

100 տարի Համակցված նշխար

Ժամերգություն Նջամենայում՝ Մենք հավատարմորեն ենք պահում մեր խոստումը

Խմբագրական՝ Գովաբանել և շնորհակալություն հայտնել

Եկեղեցական ուսմունք՝ Հնազանդություն

New Apostolic Church International

Գովաբանել և շնորհակալություն հայտնել

Լուսանկարում՝ ՀԱՀԿ գլխավոր քարտուղար

Սիրելի հավատքի եղբայրներ և քույրեր,

այս տարվա նշանաբանը՝ ,, Փառք Աստծուն՝ մեր երկնային Հորը,, բովանդակում է երեք խնդիր, որ մենք նկատի ենք ունեցել 2017 –ի համար: Եթե մենք Աստծո և նրա արարչագործության մեծությունը գիտակցել ենք,- դա առաջին խնդիրն է,- մենք պետք է Աստծուն գովաբանենք և շնորհակալություն հայտնենք: Եթե ձեռք բերած իմացությամբ տեղում անշարժ մնանք, անգործունյա և համր մնանք,ապա սխալ կարձագանքենք :

Գովաբանել և շնորհակալություն հայտնել – կոնկրետ ինչպե՞ս է դա լինում առօրյայում:

Մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն զոհաբերության մեր պատրաստակամությամբ: Խոսքը միայն փողի մասին չէ: Խոսքը գնում է Աստծոն շնորհակալություն հայտնելու մասին: Մենք շնորհակալ ենք Աստծուն և նրան ինչ որ բան ենք վերադարձնում իր տվածներից:

Մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն հաշտվողականության մեր պատրաստակամությամբ: Քանի որ մենք Աստծուն շնորհակալ ենք իր ողորմածության և ներման համար, պատրաստ ենք ներելու մեր մերձավորին:

Մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն մեր ծառայությամբ: Մենք չենք ծառայում Աստծուն այն բանի համար, որ ինչ որ բան ենք վաստակել կամ ստացել: Մենք ծառայում ենք նրան, քանի որ արդեն ամեն ինչ ստացել ենք, որովհետև նա մեզ իր ժառանգությունն է խոստացել:

Այն բանից հետո, երբ մենք ճանաչել ենք Աստծո և նրա արարչագործության մեծությունը, պետք է փառաբանենք Աստծուն և շնորհակալություն հայտնենք նրան իր ողորմածության, իր օգնության համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում նրան զոհաբերելու, հաշտվելու մեր պատրաստակամությամբ և նրանով, որ մենք ծառայում ենք նրան և մեր մերձավորին:

Սրտանց ողջույններ,

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

| Մենք հավատարմորեն ենք պահում մեր խոստումը

2017-ի հունվարի 22-ի շաբաթ օրը գլխավոր առաքյալ Ժան-Էյուք Շնայդերի կողմից Նջամենայում / Չադ / անցկացված ժամերգությանը մասնակցում էին 1000 հավատացյալներ։

Լուսանկարում՝ ՆԱԵ Կանադա

Դանիել 3; 17,18

,, Որովհետև մեր Աստվածը, որին մենք պաշտում ենք, երկնքում է, կարող է փրկել մեզ բորբոքված կրակի հնոցից և ազատել մեզ քո ձեռքից։ Իսկ եթե ոչ, թող քեզ հայտնի լինի, արքա, որ քո աստվածները մենք չենք պաշտում և չենք երկրպագում քո կանգնեցրած այդ ոսկե արձանին,,։

Սրտանց սիրելի եղբայրներ և քույրեր Քրիստոսով, սիրելի հյուրեր, ես ուրախ եմ այս ժամերգությունը ձեզ հետ կիսելու և ձեզ հետ մեր Աստծու օրհնանքը ընդունել կարողանալու համար։ Այս առավոտ մենք մի խոսք լսեցինք. այն վերաբերում էր Դանիելի և նրա ընկերների պատմությանը։ Ես լիովին վստահ եմ , որ դուք բոլորդ այստեղ՝ Նջամենայում, ծանոթ եք այդ պատմությանը։ Բաբելոնի թագավոր Նաբուքոդոնոսորը հարձակվել էր Իսրայելի և Հրեաստանի վրա և գերիներին տարել Բաբելոն։ Նրանց թվում էին Դանիելը, Մեդրակը և Աբեդնակովը։ Նա նրանց մի առաջարկ է անում. ,, Ես ձեզ առաջարկում եմ երեք տարի սովորել իմ արքունիքում,,։ Անտիկ աշխարհում Բաբելոնը բարձր զարգացած քաղաքակրթություն ուներ։ Ապա թագավորը ավելացնում է.,, Դուք կուտեք թագավորի ուտեստներից և կխմեք նրա խմիչքներից,,։ Երիտասարդներին շատ է հետաքրքրում այդ առաջարկը, սակայն նրանք ասում են.,, Մենք չենք կարող թագավորի ուտեստներից ուտել, դա մեր հավատքին դեմ է,,։ Հետո նրանք գալիս են հետևյալ փոխհամաձայնությանը.,, Թույլ տվեք մեզ ուտել

մեր կերակուրը և մենք կհետևենք ձեր ուսմունքին : Դրա համար Աստված մեզ հաջողություն կնվիրի,,: Եվ նրանք այդպես էլ արեցին: Նրանք Աստծուն հավատարիմ մնացին, ենթարկվեցին օրենքին և ուսանեցին: Դրանից հետո նրանք իրավունք ունեցան ոչ միայն բարձր պաշտոններ զբաղեցնել կայսրությունում, այլ օրինանք դարձան թագավորի և ողջ երկրի համար, այսպես նրանք լավ ծառայում էին նրան:

Հետագայում թագավորը պատրաստել տվեց մի ոսկյա արձան և որոշեց. ,, Այսուհետ ոչ մի այլ աստվածներ չպետք է երկրպագվեն:Յուրաքանչյուրը պետք է երկրպագի այս արձանին, իսկ ով դա չանի, մահվան կդատապարտվի,,: Այդ ժամանակ մեր երիտասարդ մարդկանց պարզ դարձավ, որ այլևս ոչ մի փոխհամաձայնություն հնարավոր չէ. կամ նրանք պետք է ուրանային իրենց Աստծուն և ողջ մնային, կամ պետք է նրան հավատարիմ մնային և մեռնեին: Ուրիշ այլ ճանապահ չկար:

Նրանք մնացին Աստծուն հավատարիմ և ասացին թագավորին. ,, Եթե մեր Աստվածն ուզի,ապա նա կարող է մեզ փրկել,,: Դուք գիտեք այս պատմությունը: Թագավորը նրանց նետել տվեց կրակի հնոցը և երբ՝ նայեց, տեսավ, որ նրանք ոչ թե երեքն են, այլ՝ չորսը: Աստծո հրեշտակը նրանց հետ կրակի հնոցում էր, որպեսզի նրանց պաշտպանի: Ապա թագավորը նրանց հանել է տալիս, և նրանք ավելի կարևոր են դառնում թագավորության մեջ, իսկապես, օրինանքի մի մեծ աղբյուր բոլորի համար;

Սիրելի եղբայրներ և քույրեր, այս հին պատմությունը մեզ շատ բան է ասում մեր հավատքային կյանքի մասին: Այս երիտասարդ մարդիկ պատկանում էին Աստծո ընտրյալ ժողովրդին: Մենք Աստծո ընտրյալներ ենք, նրանցից ենք, ում Աստված ընտրեց որպես իր երեխաների: Երբ մենք մկրտվում և քրիստոնյա ենք դառնում, խոսք ենք տալիս մերժել մեղքը և հետևել Հիսուսին: Երբ մենք առաքյալի միջոցով կնքվում ենք Սուրբ Հոգով և ընդունում ենք Սուրբ Հոգու շնորհները, մենք պարտավորվում ենք նախապատրաստվել Տիրոջ գալստյանը: Այստեղ առկա է երկու խոստում, երկու պարտավորվածություն, որոնք մենք հանձն ենք առնում: Մենք պետք է մերժենք մեղքը և հետևենք Հիսուսին, և մենք պետք է առաքյալների միջոցով նախապատրաստվենք Հիսուսի գալստյանը:

Սակայն մենք դեռ ապրում ենք երկրի վրա և ստիպված ենք աշխատել, մեր կյանքը պլանավորել և հագուստի ու սննդի համար հոգալ: Մենք պետք է հոգանք մեր երեխաների և նրանց ապագայի համար: Թեև մենք քրիստոնյաներ և Աստծո զավակներ ենք, սակայն մենք ուզում ենք հաջողակ կյանք ունենալ: Մենք դատապարտված չենք աղքատ ապրելու, այն բանի համա, որ նորառաքելական ենք: Մեզ արգելված չէ կյանքում հաջողություն ունենալը, ինչ է, թե մենք Աստծո զավակներ ենք: Նորմալ է հաջողակ և երջանիկ լինել ուզենալը, նորմալ է, որ մենք ձգտում ենք սոցիալական որոշակի հաջողության:.

Մեր բարձրագույն առաջնորդությունը Աստծո թագավորությունն է:

Այս երիտասարդ մարդկանց օրինակը մեզ ցույց է տալիս, թե ինչպես պետք է գործել: Մեր բարձրագույն առաջնորդությունը Աստծո թագավորությունն է: Մենք խոսք ենք տվել պահելու պատվիրանները և նախապատրատվելու Տիրոջ օրվան: Եթե մենք ձգտենք հաջողության, բարեկեցության և երջանկության, ապա դա կանենք նրանով, որ կպահենք Աստծո պատվիրանները և առաջնորդությունը կտանք մեր հոգուն: Դա մեր պարտավորվածությունն է: Այո, մենք ուզում ենք հաջողություն ունենալ մեր կյանքում, այս երկրի վրա, բայց նրանով, որ պահենք Աստծո պատվիրանները և մեր հոգիներին գերադասություն տանք ; կրակի հնոցում գտնվող երիտասարդների օրինակը մեզ ցույց է տալիս, որ դա հնարավոր է, միայն թե մենք պետք է գործենք նրանց նման :.

Մենք պետք է կատարենք պատվիրանները, հավատարիմ մնանք և մյուս կողմից՝ նաև աշխատենք: Մենք չենք ուզում սիրելի Աստծուն ասել. ,, Լսիր, ես հետևում եմ պատվիրաններին, ես ձգտում եմ մեղք չգործել, ես եկեղեցի եմ գնում և հոգ եմ տանում իմ հոգու համար, ինձ տուր այնքան փող, ինչքանի կարիք ես ունեմ,,: Մենք պետք է երկուսն էլ անենք՝ մենք պետք է մեր խոստումները, որ տվել ենք Աստծուն, պահենք և աշխատենք, ինչպես մյուս բոլոր մարդիկ: Եթե մենք երկուսն էլ անենք. աշխատենք, մեզ և մեր երեխաների համար ներդրումներ անենք և Աստծո պատվիրանները պահենք ու մեր հոգիներին առաջնություն տանք, ապա Աստված մեզ կօրհնի:

Ինչպե՞ս է հորդում նրա օրհնանքը: Երբեմն Աստված խոսում է հաջողության մասին, և մենք կյանքում հաջողություն ենք ունենում, փող ենք ունենում, մենք առողջ ենք լինում, լավ մասնագիտություն ենք ունենում, նրա օրհնանքը կայանում է նրանում, որ մենք ոչ միայն օրհնանք ենք ունենում, այլ, որ մենք Հիսուս Քրիստոսին են ունենում: Մենք խաղաղություն ենք ունենում սրտերում: Մենք փրկություն ենք ունենում: Ինչպիսի օրհնանք:!

Երբեմն օրհնանքն արտահայտվում է այլ ձևով. մենք չենք ստանում այն ամենը, ինչը մենք կուզենայինք ստանալ: Մենք մեր ոչ բոլոր ձեռնարկումներում ենք հաջողություն ունենում, թեև մենք հնազանդ էինք Աստծոն և պահել էինք պատվիարանները: Բայց մի բան պարզ է, որ Աստծո օրհնանքը առկա է, մենք խաղաղություն ենք ունենում սրտում: Մենք կարիք չենք ունենում մյուսներին բողոքելու, մենք դառնացած և ագրեսիվ չենք: Անգամ, եթե մեր բոլոր երազանքները չեն իրականացել, այնուամենայնիվ, մենք խաղաղություն ունենք մեր սրտերում և երջանիկ ենք Հիսուս Քրիստոսով:

Դա է օրհնանքը, որը Աստված տալիս է նրան, ով նրան հնազանդ է և իր աշխատանքն է անում: Իր կամքով նա մեզ երբեմն հաջողություն է տալիս և դրանից էլ՝ սրտի խաղաղություն: Մենք մեր հոգին չենք վաճառում սատանային, սակայն, Աստված երբեմն մեզ ասում է. ,, Ոչ, ես քեզ ոչ մի հաջողություն չեմ տալիս, սակայն ես քեզ օրհնում եմ,,: Եվ, եթե անգամ մենք չունենք այն ամենը, ինչը որ ուզում ենք, ունենք խաղաղություն սրտում և երջանիկ ենք Հիսուս Քևրիստոսով, և մենք օրհնանք ենք մյուսների համար:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ով պահում է Աստծո պատվիրանները, երբեք չի վիրավորում իր մերձավորին:

Ցավոք, այսօր շատ մարդիկ ուզում են բացարձակ հաջողություն ունենալ: Նրանք ուզում են հարստանալ, երջանիկ ու հռչակավոր լինել, և որպեսզի այդ նպատակին հասնեն, նրանք պատրաստ են դիակների վրայով անցնել: Ով ուզում է հաջողություն ունենալ նրանով, որ հետևում է Քրիստոսի և Աստծո օրենքին, օրհնանք է մյուսների համար, քանի որ նա երբեք իր երջանկությունը ուրիշի դժբախտության վրա չի կառուցում : Նա օրհնանք է, քանի որ Քրիստոսի ճշմարիտ վկան է և ապացուցում է, որ ինչ Քրիստոսն է պահանջում, կարելի է անել, այն հնարավոր է: Սա կարող ենք մենք այս պատմության / կրակի հնոցում գտնվող մարդկանց մասին/ առաջին մասից սովորել:

Գլխավոր առաքյալ Ժան -Լյուք Շնայդերը առաքյալներ է ձեռնադրում Նդանգալնգար Նաոյին/ աջից / և Ժան Բլագե Քոիյումթանին / կենտրոնում/

Սակայն հետևում է այս պատմության երկրորդ մասը, հատկապես արձանի և կրակի հնոցի մասը: Մենք ևս երբեմն այնպիսի իրավիճակի ենք հանդիպում, երբ ոչ մի փոխհամաձայնություն հնարավոր չի լինում: Մենք ստիտպված ենք լինում որոշում կայացնելու, ընտրություն անելու՝ կամ մենք Աստծո կողմն ենք, կամ՝ նրա դեմ: Մենք այնպիսի իրավիճակի մեջ ենք լինում, երբ ստպված ուրանում ենք Աստծուն, որպեսզի ինչ որ բան ստանանք, որտեղ և ոչ մի այլ փոխհամաձայնություն հնարավոր չի լինում: Այստեղ պետք է ընտրություն անել և այն էլ՝ լավ ընտրություն: Երբեմն գործ ենք ունենում հակառակորդի հետ, որոնց Նոր կտակարանը ,, Քրիստոսի հակառակորդներ ,, է անվանում, մենք համագործակցում ենք մարդկանց հետ, որոնք մեզ ցավ են պատճառել և մեզ հետ վատ են վերաբերվել, այն բանի համար, որ մենք քրիստոնյա ենք, որ Աստծո զավակներ և նորառաքելականներ ենք :

Այս աշխարհի շատ երկրներում քրիստոնյաները հալածվել են իրենց հավատի պատճառով, նրանց ընտրության առաջ են կանգնեցրել. ,, Կամ դու պետք է ուրանաս Քրիստոսին, կամ քեզ սպանում ենք,,: Շատ քրիստոնյաներ քաջություն են ունենում ասելու. ,, Ավելի լավ է մեռնել, քան մերժել Քրիստոսին,,: Սա ոչ միայն քրիստոսնեկան եկեղեցու առաջին շրջանում է եղել, ցավոք, նաև այսօր է լինում այս աշխարի

վրա, և մենք աղոթում ենք այս քրիստոնյաների համար, որպեսզի Աստված նրանց օգնի: Այստեղ՝ Նջամենայում, մենք այդպիսի իրավիճակի մեջ չենք, այնուամենայնիվ, կան մարդիկ, ովքեր մեզ վատություն են անում, քանի որ մենք հետևում ենք Աստծո կանոններին, նրանք ծիծաղում են մեզ վրա, որ մենք նորառաքելականներ ենք,նրանք մեզ վատ են վերաբերվում մեր հավատի պատճառով:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք պետք է դիմադրենք: Ես գիտեմ, որ հեշտ է ասել. ,, Այդ դեպքում ես կգնամ մեկ այլ եկեղեց ի և կհարեմ այլ կրոնի, որպեսզի ծաղրանքի չենթարկվեմ,,: Ոչ, եկեք Քրիստոսին հավատարիմ մնանք, մկրտության մեր երդմանը հավատարիմ մնանք, կնքման մեր երդմանը հավատարիմ մնանք, նախընտրենք մի քիչ տառապել, քան մերժել մեր հավատքը:

Սիրելի եղբայրներ և քույրեր, նրանք, ովքեր այդպես են գործում, ապրում են այն, ինչ ապրել է Ստեփանոսը, նա ևս ստիպված էր տառապել, քանի որ հավատարիմ էր մնացել Հիսուս Քրիստոսին, սակայն իր տառապանքի մեջ նա տեսնում էր Հիսուս Քրիստոսին, ով երկնքից նայում է իրեն և նրա հետ էր: Նրանք, ովքեր տառապում են Քրիստոսի պատճառով, միշտ կապրեն այն, որ նա միշտ իրենց հետ է, իրենց օգնում է և մխիթարում: Այդ րիտասարդ մարդիկ ասում են թագավորին.,, Դու կարող ես անել այն, ինչ ուզում ես, մեր Աստվածն ավելի ուժեղ է: Նա կարող է մեզ մահից փրկել,,: Մենք ասում ենք սատանային. ,, Թեև դու կարող ես այսօր մեզ տառապանք պատճառել, սակայն Հիսուսն ավելի ուժեղ է, քան՝ դու: Պատմության վերջում նա հաղթանակի է տանում: Նա մեզ փրկելու է չարից և տալու է հավերժական կյանք, քանի որ մենք ունենք այն խոստումը, որ մենք հրաժարվում ենք ուրանալ Հիսուսին և մեր հավատը: Մենք նախընտրում ենք մի քիչ տառապել հանուն Քրիստոսի, որպեսզի հետո հավերժ նրա հետ լինել կարողանանք,,:

Մեկ այլ դեպք. երբեմն մենք ստիպված ենք հրաժարվել մեր ցանկությունից կամ իղձից, քանի որ դրանք մեր հավատի հետ հանմատեղելի չեն: Մենք ձգտում ենք հարստության կամ սոցիալական որևէ դիրքի, մենք ուզում ենք այս կամ այն պաշտոնը կամ դերը ստանձնել, ինչ որ մի գործի տիրանալ, սակայն մենք գիտակցում ենք, որ դրանով մենք ստիպված ենք անհնազանդ լինելու Աստծուն: Որպեսզի ստանանք այն, ինչ ուզում ենք, ստիպված ենք ստելու կամ գողանալու, կամ կաշառակեր դառնալու: Այս պարագայում մենք պետք է ասենք. ,, Ոչ, ավելի լավ է ես հավատարիմ և հնազանդ մնամ Աստծուն և հրաժարվեմ այն ամենից, ինչ ես հաճույքով կուզենայի ունենալ,,:

Սիրելի եղբայրներ և քույրեր, լինում են

գալստյանը, առաքյալներ և Սուրբ Հաղորդություն չեմ ունենա,,:

Իմ սիրելի հայրիկ, ի՞նչ ընտրության առաջ ես կանգնեցրել քո դստերը: Եվ սա միայն մի օրինակ է: Սակայն դու գիտես նաև, երբ քո դստերը տարել ես Սուրբ Հոգով կնունքի, դու խոստացել ես. , Ես ամեն ինչ կանեմ, որ նա ներկա լինի Տիրոջ գալստյան օրը,,: Եվ դու հստակ գիտես, որ եթե նա ամուսնանա այդ մարդու հետ, ստիպված է լինելու գնալ նրա եկեղեցին: Ի՞նչ որոշում ես կայացնելու դու: Սա միայն մի օրինակ է, քանի որ մենք այստեղ ,, կնոջ տան,,մեջ ենք: Այսպես լավ է:.

Սիրելի եղբայրներ և քույրեր, երբեմն մենք կարիք ենք ունենում կոնկրետ օրինակների, որպեսզի այն, ինչ մենք ուզում ենք ասել, ճիշտ հասկացվի: Ես լրջորեն կարծում եմ, եթե մենք այսպիսի ընտրություն անելու լինենք, մենք ճիշտ որոշում կկայացնենք: Մենք հավատարիմ կմնանք մեր մկրտության ու կնունքի խոստմանը, կնախընտրենք որոշ բաներից հրաժարվել, քան՝ Հիսուս Քրիստոսին ուրանալ:

Մի օր Տերն ասում է մի մարդու.,, Արի և հետևիր ինձ,,: Նա պատասխանում է. ,,Այո, ես կգամ, սակայն ես պետք է նախ իմ հորը հուղարկավորեմ,,: Հիսուսը առարկում է նրան.,, Թող մեռելները իրենց մեռելներին հուղարկավորեն և անմիջապես հետևիր ինձ,,: Հրեայի համար անընդունելի էր իր հորը չհուղարկավորելը, և ով դա չէր անում, ապա արտաքսվում էր հասարակությունից: Սրանով Հիսուն ուզում էր ասել, որ Քրիստոսին հետևելն ավելի կարևոր է, քան՝ հասարակության կանոնները:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք բոլորս էլ պատկանում ենք մի որոշակի հասարակության, որոշակի մշակույթի, որոշակի ցեղի, որոշակի ավանդության, և դա լավ է: Սակայն, երբ ընտանիքի, մշակույթի կամ հասարակության ավանդույթը մեզ խանգարում է Քրիստոսին հետևել, մենք պետք է ասենք. ,, Դադարեցրեք դա,,: Անգամ, երբ մեր շրջապատը մեզ վրա ճնշում է գործադրում և ասում. ,, Բայց բոլորն են այդպես անում: Սա մեզ մոտ կանոն է,,: Մենք պատասխանենք. ,, Մենք դա ևս արժևորում ենք, իրավիճակներ, երբ ոչ մի փոխհամաձայնություն հնարավոր չի լինում: Երբ մենք ստիպված ենք ուրանալ մեր Աստծուն կամ անտեսել տասը պատվիրանները, որպեսզի ինչ որ բան ունենանք, որևէ դիրք գրավենք կամ կամ մի ոլորտ մտնենք, ապա եկեք ասենք.,, Ոչ, ես չեմ ուզում իմ Աստծուն ուրանալ, ավելի լավ է ես հրաժարվեմ իմ գայթակղությունից ու իմ ցանկությունից, քան դավաճանեմ Աստծուն: Մեզ համար ավելի կարևոր է Հիսուս Քրիստոսը, քան՝ հարստություններն ու երկրային հաճույքները,,: Մենք պետք է մշտապես այս ուղու վրա մնանք;.

Խոսքը միայն Աստծո պատվիրանները պահելու մասին չէ: Մենք խոսք ենք տվել նաև նախապատրաստվել Տիրոջ գալստյանը: Դրա համար մենք կարիք ունենք ժամերգությունների, Աստծո խոսքի, Սուրբ Հաղորդության, դրա համար մենք պետք է հետևենք առաքյալներին: Այս պարագայում ևս ստիպված ենք երբեմն որոշում կայացնել՝ կամ այս, կամ՝ այն: Սակայն մեր բոլոր որոշումներում մենք մի բան գիտենք. ,, Եթե ես հիմա փակեմ այդ ճանապարհը, չեմ կարող այլևս ներկա լինել ժամերգություններին,,:

> Տերը մեզնից պահանջում է, որ մենք ներենք մեր մերձավորին:

Մի կոնկրետ օրինա՞կ. ,, Երբ ես ամուսնանամ այս մարդու հետ, ես ստիպված ընդունելու եմ նրա կրոնը: Ես այլևս չեմ կարողանա գնալ իմ եկեղեցին, այլ՝ ստիպված գնալու եմ նրա եկեղեցին, հետո էլ ես այլևս չեմ կարողանա նախապատրաստվել Տիրոջ

սակայն հասկացեք մեզ, խնդրեմ, Քրիստոսի կանչն ավելի կարևոր է, քան՝ բոլոր այդ ավանդույթները,,:

Ես ևս մի երրորդ գործոն էլ եմ մեջբերում, որում ոչ մի փոխհամաձայնություն հնարավոր չէ, որպեսզի հետևեն Քրստոսին: Մենք պետք է հրաժարվենք հին Ադամից, հին արարածից: Ով մկրտվել է ջրով և հոգով, պետք է մեռցնի հին մարդուն, որպեսզի Քրիստոսով նոր մարդ դառնա; Դա ցույց է տվել Հիսուսը, դա ցույց է տվել Պողոս առաքյալը, որպեսզի Հիսուսով աճել կարողանան, պետք է մյուսը պակասեցնեն:

Մենք պետք է հրաժարվենք այն ամենից, ինչը մեր բնավորության ու անհատականության մեջ դուր չի գալիս Աստծուն: Մենք բոլորս էլ ունենք մեր անհատականությունը, մեր կարծիքներն ու գաղափարները, սակայն այնպիսի կարծիքներ և գաղափարներ, որոնց հետ Հիսուսը համաձայն չէ: Ես կարող եմ կարծիք ունենալ իմ մերձավորի մասին և ասել. ,, Ես գիտեմ. որ նա չար է, որ նա այսպիսին կամ այնպիսին է, ես դա զգացել եմ,,: Իսկ Հիսուսն ասում է մեզ. ,, Այո, բայց ես նրան բոլորովին այլ կերպ եմ տեսնում: Ես սիրում եմ նրան և ցանկանում եմ, որ նա երանելի լինի, ինչպես դու,,: Եվ ներքին մի վեճ է առաջանում, թե ով է իրավացի՝ Հիսուսը, թե՞ ես: Իսկ ես կարող եմ բացատրել. ,, Ես գիտեմ, որ այդ մարդը չար է,,: Այդ դեպքում ես համաձայն չեմ լինի Քրիստոսի հետ: Ես պետք է որոշեմ՝ կամ դու պետքէ մնաս քո կարծիքին և Հիսուսի հետ համամիտ չլինես, կամ դու հրաժարվում ես քո կարծիքից և հաշտ ես լինում Հիսուսի հետ: Ի՞նչ որոշում կկայացնես դու:

Տերը մեզնից պահանջում է, որ մենք ներենք մեր մերձավորին: Մենք ասում ենք. ,, Եթե ես նրան ներեմ,նրա համար հեշտ կլինի: Ես կկորցնեմ իմ պատվախնդրությունը, եթե ես ներեմ, ես թույլ կլինեմ, հլու կլինեմ,,: Բոլորը քեզ թուլակամ կհամարեն, եթե դու տեղի տաս, բայց ինչու՞ ես դու ընդհանրապես ներում: Նրա համար, որ մենք գիտենք, որ կարիք ունենք մեր մեղքերի ներման և դրա համար էլ մենք ևս պետք է ներենք: Մեզ համար Քրիստոսով խաղաղությունը և ողորմածությունն ավելի կարևոր է, քան՝ պատվախնդրությունը և վրեժխնդրությունը: Ուրեմն, հրաժարվենք մեր պատվախնդրությունից և արդարության մեր ըմբռնումից, որպեսզի Հիսուսի ճանապարհով գնանք և ներենք:

Մենք հրաժարվում ենք այն ամենից, ինչը խաթարում է միասնությունը: Շատերն ասում են մեզ. ,, Ինչ ես անում եմ, դա լավ է, ես ճիշտ եմ,, և դա կարող է ճիշտ լինել. նրանք ճիշտ են: Սակայն իրենց պահվածքով նրանք խաթարում են Աստծո զավակների միասնությունը: Ուզու՞մ ես դու իրավացի լինե, թե՝ միասնությունը պահպանել: Նրա համար, ով Հիսուսին հետևում է և ուզում է նախապատրաստվել նրա գալստյանը, ժողովրդի միասնությունն ավելի կարևոր է, քան՝ իրավացի լինելը: Հանուն Հիսուսի ավելի լավ է իրավացի չլինել և պահպանել միասնությունը:

Սիրելի, եղբայրներ և քույրեր, սա է մեզ սովորեցնում այս պատմությունը: Մենք ընտրվել ենք Աստծո կողմից, մենք խոսք ենք տվել նրա հավատարմությանը, մենք խոստացել են պահել նրա պատվիրանները և նախապատրաստվել Քրիստոսի գալստյան ը: Դա մեզ չի խանգարում կյանքում հաջողություն ունենալ: Մենք պետք է աշխատենք: Ով հնազանդ է և աշխատում է, օրհնվում է Աստծո կողմից, Աստված նրան հաջողություն է տալիս և նվիրում խաղաղություն: Եվ, եթե նա անգամ հաջողություն չի ունենում, նա խաղաղություն և ուրախություն է ունենում սրտում, խաղաղություն՝ Հիսուս Քրիստոսով: Նա օրինանք է իր շրջապատում, քանի որ նա ոչ ոքի չի վիրավորում հաջողության ձգտելու պատճառով: Շատ դեպքերում մենք ստիպված ենք լինում, այնուամենայնիվ, որոշում կայացնելու, քանի որ ոչ մի փոխհամաձայնություն հնարավոր չի լինում: Մենք նախընտրում ենք Քրիստոսի կամքը և նրա համար տառապում, նրան ուրանալու փոխարեն: Մենք հրաժարվում ենք այն ամենից, ինչը մեզ կխանգարի Հիսուսին հետևելու և նպատակին հասնելու համար: Եվ մենք թույլ ենք տալիս մեռնելու հին Ադամին, որպեսզի Քրիստոսով նոր արարած դառնանք: Աստված դրա համար երաշխավորում է իր օրհնանքը: Երիտասարդները փրկվեցին մահից և ավելի բարձր դիրք գրավեցին, քան առաջ: Դրահամար Հիսուսը մեզ փրկելու է, նա մեզ հարություն է տալու ու մենք նրա մոտ լինելու ենք որպես թագավորներ և քահանաներ իր թագավորության մեջ: Մենք չենք վարանելու, մնալու ենք Հիսուս Քրիստոսի հետ: Ամեն:

Հիմնական մտքեր

Աստված օրհնում է նրանց աշխատանքը, ովքեր հնազանդ են նրան,նրանով, որ նրանց խաղաղություն է նվիրում: Նա փրկություն է նվիրում նրանց, ովքեր մերժում են մեղքը և առանց որևէ փոխհամաձայնությունների հետևում են Տիրոջը:

Որդու ոտնահետքերով

Լուսանկարը՝ Միքայել Վոյիգթ

Այս տողերը վերաբերում են Աստծո Որդու մարդացմանը:,, Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստված էր և ճշմարիտ մարդ,,. հնչեցրեց եկեղեցու ղեկավարը :

Ճշմարիտ Աստված…

,, Նա պատկերն էր անտեսանելի Աստծո: Աստված՝ Աստծո Որդին, աշխարհ եկավ, և նրանով, նրա մեջ կարելի է տեսնել Աստծուն ու ճանաչել, թե ինչպիսին էր և ինչպիսին է նա իրականում,,:

- Աստված ճշմարտություն է. ,, Աստծո Որդին, այո, այստեղ է եղել: Աստված խոստացել էր և դա իրականություն դարձավ,,:
- Աստված սեր է ոչ թե տեսականորեն, այլ՝ գործունյա սեր. ,, Նա գնաց մինչև վերջ, մինչև խաչ,,:
- Աստված մոտիկ է. ,, Նա մարդկանց բաժանել է ճակատագիր - նաև՝ ցավ և մահ,,:
- Աստված ողորմածություն է. ,, Ոչ թե Աստված է, ով ուզում է վրեժ լուծել և մարդկանց պատժել,,:

… և ճշմարիտ մարդ

,,Հիսուսը մարդ էր բոլորի նման, բոլոր մարդկանց հավասար, և չնայած դրան, նա Աստծո Որդի էր,- ասաց գլխավոր առաքյալը,- ինչպե՞ս պետք է դա հասկանալ,,:

- Հիսուսը նոր Ադամն էր. ,, Մարդ, ով անմիջական հարաբերության մեջ էր իր Աստծո հետ,,:
- Շատ եղբայրների մեջ Հիսուսը առաջնեկն էր. ,, Ովքեր հավատում են Հիսուսին, նրանց իշխանություն է տրված՝ Աստծո զավակ դառնալու,,:

,, Որպես Աստծո զավակներ՝ մենք պետք է Աստծո պատկերին նմանվենք,,: Իսկ դա շատ կոնկրետ նշանակում է՝ լինել այնպիսին, ինչպիսին Հիսուս Քրիստոսն էր և նույն հարաբերությունն ունենալ Աստծո հետ, ինչպիսին ուներ Հիսուս Քրիստոսը,,:

Պատկերի նմանությունը որպես օրինակ

,, Ի՞նչն էր առանձնահատուկ Աստծո Որդու մոտ երկրի վրա,- հնչեց հարցը ղեկավար սկզբունքը փնտրելու նպատակով,- և ինչը պետք է մեզ համար հատկանշական լինի,,:

- Աստծո զավակ լինելու մեր հստակ գիտակցությունը. ,, Որպես Աստծո զավակներ, մենք գիտենք, որ դեպի Հայրը տանող ճանապարհի վրա ենք: Այս գիտակցությունը պետք է մեր մեջ ապրի մեր կյանքի յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր պահի, որ մենք իմանանք, որ այսպես չի մնա, սա միայն մի էտապ է, մենք դեպի Հայրը տանող ճանապարհի վրա ենք,,:
- Ներքին կապվածությունը երկնային Հոր հետ: ,, Մենք պետք է նրան լսենք, մենք պետք է նրա հետ խոսենք, քանի որ ուզում ենք նրան ավելի լավ ճանաչել,,: Դրա համար մենք կարիք ունենք Սուրբ Հոգուց բխող խոսքի և եռանդուն աղոթքային կյանքի:
- Անսահման վստահություն ը Հոր հանդեպ: ,, Ես բացարձակ այլևս ոչինչ չեմ հասկանում, իմ վերջն է, ես այլևս ոչինչ չեմ կարողանում, ինձ համար ամեն ինչը շատ շատ է, բայց, Հայր, ես վստահում եմ քեզ: Ես ամենը, ամեն ինչ դնում եմ քո ձեռքին,,:
- Հնազանդությունը Հոր հանդեպ: ,,Մենք ունենք մեր պատկերացումները, մենք ունենք մեր ցանկությունները, այդ ամենը կարգին է: Մենք գիտակցում ենք այս աշխարհի առաջարկները և դրանք նաև օգտագործում ենք: Սակայն կա մի սահման՝ դա Աստծո կամքն է,,:
- Մարդակց ծառայելը: ,,Մենք ծառայում ենք մեր շրջապատի մարդկանց, որպեսզի դրանով ծառայենք Աստծուն:- Փրկությունը, դա Տիրոջ գործն է, սակայն մենք գտնվում ենք ծառայության մեջ, որով մարդիկ ողորմածության առաջարկը ճանաչել կարողանան,,:

, ,Դա ես չեմ ասում, դա ասում է Պողոս առաքյալը,,. այսպես ավարտեց գլխավոր առաքյալ Շնայդերը: ,, Աստված ուղարկեց իր Որդուն, նա մարդացավ այս երկրի վրա, սակայն նա նաև Աստծո Որդի էր: Մենք պետք է նրա պատկերի նման լինենք, քանի որ Աստծո զավակներ ենք: Ես կարծում եմ, որ սա միանգամայն գեղեցիկ առաջադրանք է,,:

ՄԵՍԻԱՆ և ՆՐԱ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

/ ԵՍԱՅԻ 11 /

Հիսուսի ծննդից ավելի քան 700 տարի առաջ Երուսաղեմում ապրում էր մի մարգարե: Նրա անունը Եսայի էր: Աստված նրա միջոցով տեղեկացնում է Մեսիայի գալստյան մասին: Եսային նկարագրում է , թե ինչպես է լինելու, երբ խաղաղության թագավորը իր թագավորությունը հաստատի:

Հեսսեիի արմատից գավազան պիտի ընձյուղվի և ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից:

Նրա վրա պիտի իջնի Տիրոջ ոգին, իմաստության և հանճարի ոգին, խորհրդի ու զորության ոգին, գիտության և աստվածապաշտության ոգին:

Աստծու երկյուղի ոգին պիտի լցնի այն: Ոչ ըստ կարծիքի պիտի դատի նա և ոչ էլ ըստ խոսքերի հանդիմանի:

Այլ նա տնանկի իրավունքը պիտի պաշտպանի և արդարությամբ պիտի դատի երկրի տառապյալներին:

Իր բերանի խոսքով պիտի հարվածի երկրին և իր շուրթերի շնչով ոչնչացնի ամբարիշտներին:

Արդարությամբ պիտի գոտևորի իր մեջքը և ճշմարտությամբ կապի իր կողերը:

Գայլն ու գառը միասին պիտի ուտեն, ընձառյուծը ուլի հետ

պիտի մակաղի:
Մի փոքր տղա պետք է հովվի հորթերին, կորյուններին և անասուններին միմյանց հետ: Եվ մատաղատի մանուկը պիտի հովվի նրանց: Եզն ու արջը միասին պիտի ուտեն, նրանց ձագերը խառը պիտի շրջեն, և առյուծը, ինչպես եզը, հարդ պիտի ուտի:Մատաղատի մանուկը իր ձեռքը պիտի մտցնի իժերի բունը և իժերի ձագերի բունը, ու նրանք ոչ ոքի չպիտի կարողանան վնասել և խայթել իմ սուրբ լեռան վրա, քանզի ամբողջ երկիրը լցվելու է Տիրոջ գիտությամբ, նման առատ ջրերին, որոնք ծածկում են ծովը: Եվ դա տեղի է ունենալու այն ժամանակ, երբ Հեսսուի արմատից գավազան ընձյուղվի՝ որպես նշան ժողովուրդների համար: Նրան են հարցնելու ժողովուրդները, իսկ այն վայրերը, որտեղ նա է բնակվելու, փառահեղ են լինելու:

Աստվածաշնչում մարգարե է անվանվում նա, ով ընտրվել է Աստծո կողմից՝ Աստծո կամքը տեղեկացնելու: Մարգարեները խրատում էին Իսրայելի ժողովրդին և զգուշացնում էին կործանումից ,քանի որ իսրայելացիներն ու նրանց տիրակալները արհամարհում էին Աստծո կամքը և երկրպագում էին կուռքերին: Շատ մարգարեներ խոսում են ապագայի մասին: Եսայի մարգարեն ամենից առաջ վկայակոչում է Հիսուս Քրիստոսին և Տիրոջ օրը: Եսային նկարագրում է Աստծո Որդու ծնունդը, գործունեությունն ու տառապանքները ու նաև՝ թե ինչպիսին է լինելու Տիրոջ խաղաղության թագավորությունը:

Աղբյուրը՝,,Մենք՝ երեխաները,, ամսագիր: հրատարակություն 12/2016 , նկարազարդումը՝ Միրելլա Ֆորթունաթոյի

ԱՅՑ ՍՈՒՀԱՆԻԻՆ՝ ՌԱՅՊՈՒՐԻՑ / ՀՆԴԿԱՍՏԱՆ/

Այստեղ դուք տեսնում եք ինձ- ես ծաղիկներ շատ եմ սիրում:

Իմ անունը Սուհանի է, ես տասը տարեկան եմ: Ես ապրում եմ Ռայպուրում, այն Չատիսգարհի Դաշնային պետության մայրաքաղաքն է Հնդկաստանում: Ռայպուրը մի քաղաք է, որտեղ հեծանիվ վարելը բավականին սիրված է: Ես էլ եմ հաճույքով հեծանիվ վարում, տեսեք իմ հեծանիվը:

Իմ հայրիկի անունը Դանիյալ է, նա ունի նորաձևության խանութ-սրահ: Ես հաճույքով եմ շքեղ հագնվում, սակայն իմ հոր խանութում միայն տղամարդկանց հագուստներ են վաճառվում: Իմ մայրիկի անունը Յանկի է: Նա հոգ է տանում մեր տան և մեզ՝ երեխաներիս համար: Իմ ավագ եղբայր Արիանը տասներկու տարեկան է: Մենք ունենք մի մեծ ընտանիք: Լուսանկարում դուք տեսնում եք իմ մորաքույրերից և հորեղբայրներից,

զարմիկներից մի քանիսին: Բայց սա միայն իմ հայրիկի ընտանիքն է: Պատկերացրեք ընտանեկան լուսանկար՝ բոլոր հարազատներով:

Բարի գալուստ մեր տուն: Որքան շատ մարդիկ են Հնդկաստանում ապրում

մեկ հարկանի տանը: Մենք չորսով կիսում ենք ննջասենյակը և ունենք մեկ միջանցք, մեկ փոքր խոհանոց և մեկ լոգասենյակ:

Իմ սիրած ուտեստն է՝ իտալական մակարոնը և սպագետին- այնքան համեղ է:

Այստեղ ես իմ դպրոցի դարպասի առաջ եմ: Այնտեղ առարկաների մեծ մասը դասավանդում են անգլերենով, սակայն տանը մենք խոսում ենք հինդի լեզվով: Հինդին Հնդկաստանի ազգային լեզուն է:

Այստեղ ես ձեզ ցույց եմ տալիս մի քանի նկարներ. որոնք ես արել եմ դպրոցում կամ տանը: Ես շատ եմ սիրում նկարել և գծագրել:

Երբ իմ հայրը ազատ է լինում, ինձ հետ երբեմն գնում է առևտրի կենտրոններ գնումների: Ես հատկապես ուրախանում եմ, երբ ես իրավունք եմ ունենում խաղասրահում ավտոմեքենա վարել:

Այստեղ դուք տեսնում եք ինձ եկեղեցու առաջ՝ իմ եղբոր, ծնողների և տատ ու պապիկների հետ: Ռայպուրում մենք եկեղեցու առանձին շենք չունենք, 35 տարի ի վեր ժամերգություններն անց են կացվում վարձակալած սրահում: Մենք կիարկնօրյա դպրոցի ութ աշակերտներ ենք, մեզ հետ պարապում է հինգ ուսուցիչ, ուսուցչուհիներից մեկն իմ մայրն է: Կիրակնօրյա դպրոցը սկսվում է կիրակի առավոտյան, իսկ դրանից հետո մենք բոլորս տոնում ենք ժամերգությունը:

Սկզբուրը՝ ,,Մենք՝ երեխաներս,, ամսագիր, հրատարակություն 12/2016; լուսանկարը՝ մանավոր

Հնազանդությունը որպես նշան ընտրյալների

Լուսանկարը՝ © ZoneCreative - Fotolia.com

Մերձավորի հանդեպ վերաբերմունքով է արտացոլվում Աստծո հանդեպ ունեցած վերաբերմունքը: Դա վերաբերում է ոչ միայ սիրուն, այլ նաև՝ հնազանդությանը: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերի խոսքերը քրիստոնեական հիմնական արժանիքներից մեկի մասին:

Հնազանդությունը քրիստոնեական ուսմունքի գլխավոր հասկացություններից է: Աստծո առաջ հնազանդությունը Հիսուսը համարում է անժխտելի նախապայման փրկության հասնելու համար / Մատթեոս 128;3,4/: Նոր կտակարանային գրքերը հնազանդությունը ամենից առաջ նկարագրում են որպես ընտրյալի հատկանիշ / Կողոսացիներին 3;12, Ֆիլիպեցիներին 2;3-8/: Սրանից ելնելով՝ ինձ համար հեշտ է այս հասկացությունը ավելի մոտիկից ուսումնասիրելու և մեզ հարց տալու, թե այն այսօր մեզ համար ինչ է նշանակում:

Հնազանդություն Բարձրյալի առաջ

,, Աստծո առաջ հնազանդություն,, տեսակետը ավելի հեշտ է ըմբռնելը: Աստծո առաջ հնազանդ լինել, նշանակում է՝

- իմանալ, որ մենք ամբողջությամբ արժանանում ենք Աստծո ողորմածությանը
- ցույց տալ աստվածավախություն- Աստված կատարյալ է և անսխալ, մենք չենք կարող նրան ամբողջապես հասկանալ, ոչ էլ՝ ինչ որ բան ստիպել:
- լիովին արժանանալ նրա սիրուն:

Աստծո առաջ հնազանդ լինել, չի նշանակում, թե մենք թերագնահատում ենք մեր անձը: Պատվիրանը՝ ,, Սիրիր քո մերձավորին քո անձի պես,, հստակորեն ցույց է տալիս, որ Աստված մեզ չի արգելում, որ մենք մեզ արժևորենք, այսինքն՝ սիրենք, կամ մեր մասին հոգանք: Եկեք պաշտպանվենք կեղծ համեստությունից, որը մեզ հավատալ է տալիս, որ մենք անընդունակ ենք անելու այն, ինչ Աստված մեզնից սպասում է: Իսկական հնազանդը կարծում է, որ Աստված իրեն ավելի լավ է ճանաչում, քան ինքն իրեն: Աստծո օգնությամբ նա կարող է անել այն, ինչ նրանից սպասվում է:

Հնազանդություն մեր մերձավորի հանդեպ

Մերձավորի հանդեպ հնազանդությունը Սուրբ Հոգու պտուղներից է: Այն մեզ սովորեցնում է, որ

- Աստված մարդուն չի սիրում նրա համար, թե ինչ է նա, այլ, որ Աստված սիրում է նրան, քանի որ նա սեր է: Նա սիրում է մեր մերձավորին, ինչպես մեզ, անգամ, եթե նա բոլորովին տարբեր է մեզնից և որը չպետք է դառնա այնպիսին, ինչպիսին ես եմ, որպեսզի սիրված լինի, ինչպես ես :
- անկախ մեր ծառայությունից՝ մենք արժանանում ենք ողորմածության :

Պողոս առաքյալը Ֆիլիպեցիների գրած նամակում այսպես է գրում. ,,... խոնարհությամբ մեկդ մյուսին ավելի լավ համարեցեք, քան ինքներդ ձեզ,,: Առաջին հայացքից այս խոսքը անիրական է թվում, մեզնից պահանջվում է, որ մենք մեզ ավելի քիչ ուշադրություն դարձնենք, քան՝ մյուսներին, անկախ նրանից, թե նա ինչպիսին է: սակայն այսպիսի մեկնաբանությունը տեղին չէ: Դրա ապացույցն

է այն, որ Պողոսը իրեն այդպես չէր տեսնում և և չէր հապաղում բացատրել, որ նա ոչ մի դեպքում մյուսներից պակաս չէ / 2.Կորնթացիներին 11;5/։

Մենք աստվաշնչյան խոսքի առաջին բացատրությունը գտնում ենք հետևյալ տողում. „ … Միայն ձեր շահը մի փնտրեք, այլ յուրաքանչյուր ոք՝ ընկերոջ շահն էլ,,/ Ֆիլիպեցիներին 2;4/։ <<նաև,,բառը շատ կարևոր է։ Ոչինչ չի արգելում մեզ սեփական շահից ելնելով որոշումներ կայացնել, նախապայմանն այն է, որ մյուսների շահն էլ պետք է հաշվի առնել։

Հիսուս Քրիստոսի օրինակը

Պողոսը շարունակում է։ Ըստ նրա՝ մեր հնազանդությունը պետք է Հիսուս Քրիստոսին հետևելը լինի. ,, Նա, որը Աստծո կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝ հնազանդ լինելով մինչև մահ և այն էլ մահվան խաչի վրա,,։/ Ֆիլիպեցիներին 2;6-8/։

Հիսուսը գիտեր իր աստվածային դիրքն ու զորությունը։ Սակայն նա լիովին իրեն ենթարկեց իր Հոր կամքին։ Նա ցածրացավ մեղավորի աստիճան, ծառայեց նրանց և տառապեց, որպեսզի վերջապես նրանց իր հետ բարձրացնի։

Մեր մեջ Հիսուսի տեսակետն ունենալը նշանակում է՝ գիտակցել Տիրոջ նման մեր ընտրված լինելը ։ Մենք գիտենք, որ մենք նման ենք մեր մերձավորին, մենք այնպիսին ենք, ինչպիսին այդ մեղավորները, որ փրկվելու համար կարիք ունեն ողորմածության ։ Եվ մենք գիտենք, որ առաքված ենք նրան ծառայելու, և բարու համար տառապելու ու փրկության ճանապարհով գնալու։

Հնազանդությունը որպես Աստծոն ծառայող

Իր պաշտոնի սրբության գիտակցումով՝ Աստծոն ծառայողը հնազանդ է։ Նա գիտի, որ արժանանալու է ողորմածության»։ Անգամ, երբ մենք մեր ծառայությունը տասնամյակներ շարունակ կատարում ենք, չենք վարժվում դրան։

Հնազանդ ծառայողը բոլոր իրավիճակներում իրականացնում է իր Տիրոջ ցուցումները։ Ոչ մի իրավիճակ չի կարող արդարացնել, որ մենք Հիսուս Քրիստոսի կամքը չկատարենք։ Դրանից բացի, նա կարող է իր առաջդրանքը ճիշտ գնահատել։ Տերը ուղարկել է իր առաքյալներին, որպեսզի ուսուցանեն այն, ինչ նա է նրանց տվել, պաշտոնի հեղինակությունը կայանում է միայն Ավետարանի տեղեկացման մեջ։ Մեր գիտելիքներն ու փորձը կարող են որոշակի դեպքերում օգնել, բայց մենք չենք կարող հիմնվել մեր պաշտոնի հեղինակության վրա, որպեսզի անձնական հավատքային կյանքը ուսուցանենք։ Մենք պետք է մտածենք մեր ապագայի մասին, նախագծեր զարգացնենք և դրանք կյանքի կոչենք։ Սակայն մենք չենք կարող սպառնալ կամ ստիպել։ Նա է, որ որոշում է մեր ձգտումների արդյունքները։ Դա լիովին գիտեր Պողոսը, երբ գրում էր Եփեսացիներին. ,, Աստծո կամքով նորից կգամ ձեզ մոտ,,/ Գործք 18,21/։ Աստված թույլ չտվեց կատարվեն Պողոսի բոլոր մտադրությունները/ Հռոմեացիներին 1,13/։ Ինչու՞ պետք է նա մեզ թույլ տա։

Հնազանդությունը համայնքի հանդեպ

Հիսուսի օրինակով առաքյալները ծառայողներ են / Հովհ. 13,15/։Նրանք ոչ թե տեր են համայնքի հավատի վրա, այլ՝ ուրախության օգնականներ / Կորնթացիներրին 1;24. / ՆԱԵԴ 7. 6. 3/։ Բոլոր սպասավորները ծառայողներ են։ Բայց, իսկապե՞ս նրանք ծառայողներ են։ Մեծ ափսոսանքով ես այստեղ ամրագրում եմ, որ եղբայրները.

- դեռ շփոթում են , , պաշտոնի լիազորությունն,, ու ,,հիերարխիան,, ; նրանք չարաշահում են իրենց դիրքը, որպեսզի իրենց խորհուրդը պարտադրեն մինչև ինքնագիտակցության, որ քույր-եղբայրների փրկությունը պայմանավորված է տրված ցուցումներին հնազանդվելով։
- շատ հեշտ է վիրավորված և բարկացած լինել- արդյոք, մեծ նշանակություն չե՞ն տալիս իրենց անձին։

Իմ կողմից ես ձգտում եմ բաց լինել նախաձեռնությունների և նորի համար ։ Սակայն ես չեմ հասկանում, թե ինչու են մի քանիսը գործում ՝ առանց նախապես իրենց նախնիների համաձայնությունը կամ խորհուրդը հարցնելու։ Ես համոզված եմ, որ նորացումը, որը նպատակաուղղված է պառակտման, չի կարող ճիշտ ուղղությամբ գնալ։ Նմանապես համոզված եմ, որ Աստված միշտ այնպես է անում. որ Սուրբ Հոգուց ծնված միտքը իրականություն դառնա։

Նանգոն՝ Կոնգոյի հարավ-արևելքում գտնվող փոքրիկ համայնքը, հիմնադրումից 70 տարի անց ունենում է եկեղեցու առաջին սեփական շենքը

Լուսանկարում՝ ՆԱԵ Կոնգոյի Դշ

Եկեղեցու հնազանդությունը

Իր սեփական տեղը գիտակցելը -դա հնազանդությունն է: Դա վերաբերում է ոչ թե առանձին մարդկանց, այլ նաև՝ ամբողջական եկեղեցուն: Գլխավոր առաքյալ Ժան –Լյուք Շնայդերի մտքերն այս առումով :

Մի անգամ ինձ հարց տվեցին, թե ինչ է լինելու առաքյալների սպասավորության և եկեղեցական խորհուրդների հետ խաղաղության հազարամյա թագավորության ժամանակ: Ես ցանկանում եմ ձեզ անձնական մի քանի միտք արտահայտել այս թեմայի վերաբերյալ՝ առանց դրանք անձեռնմխելի ճշմարտություն համարելու:

Առաքյալների ապազան

Որպես ընտրյալների համայնք՝ Քրիստոսի եկեղեցին նոր արարչագործության մեջ զարգացել է / Նորառաքելոց եկեղեցու դավանաբանություն 6.4.5/: Եկեղեցու ներսում գործող առաքյալների ծառայության և այնտեղ նվիրաբերվող խորհուրդների տեսանկյունից արժե անդրադառնալ եկեղեցու սկզբնավորման շրջանին: Հիսուսը ձեռնադրեց առաքյալներ, որպեսզի նրանք Հոր մոտ վերադարձից հետո իր սուրհանդակները լինեն: Նա հիմնեց եկեղեցին, որպեսզի մարդիկ առաքյալների ուսմունքը և փրկության համար անհրաժեշտ խորհուրդները ընդունեն: Մեր հավատքի չորրորդ գլուխը ներկայացնում է, որ առաքյալները ուղարկվել են Հիսուսի կողմից՝ մինչև իր ,, վերադարձը,,:

Խաղաղության հազարամյա թագավորությունում Հիսուսն անձամբ լինելու է երկրի վրա, այլևս նրան ներկայացնելու սուրհանդակների անհրաժեշտություն չի լինի : Ընտրյալների առաջադրանքն է՝ լինել թագավորական

քահանայության, Քրիստոսի սուրհանդակներ և վկաներ, ինչպիսին նրա աշակերտներն էին, երբ Հիսուսը երկրի վրա էր:

Խորհուրդների ապագան

Եկեղեցում նվիրաբերվող խորհուրդները ,, նշաններ ,, են: Նրանք տեսանելի միավորը կապում են խոսքի հետ, որը վկայակոչում է այդ խոսքի ետևում կանգնած իրականությունը / ՆԱԵԿ 8/: Այդ իրականությունը ոչ այլ ինչ է , այլ՝ Փրկչի ներկայությունը:

Քանի որ Հիսուս Քրիստոսը խաղաղության թագավորությունում նորից տեսանելի է լինելու, խորհուրդները այլևս անհրաժեշտ չեն լինելու: Հիսուսն անմիջականորեն կիրառելու է իր փրկչական զորությունը, ինչպես, օրինակ, երկրի վրա ավազակների մոտ խաչի վրա արեց:

Անձնապես ես ներկայացնում եմ իմ կարծիքը, որ ես Հիսուս Քրիստոսի, մեր Փրկչի հանդեպ ակնածանքի պակասություն կցուցաբերեի, եթե ես համառորեն հաստատեի, որ առաքյալներն ու խորհուրդները նաև խաղաղության հազարամյա թագավորությունում փրկության համար դեռ անհրաժեշտ կլինեն:

Նորառաքելական եկեղեցի

Կենդանի առաքյալների կողմից ղեկավարվելով՝ պետք է նաև Նորառաքելական եկեղեցին հնազանդ լինի՝

- Ոչ Նորառաքելական եկեղեցին, ոչ էլ առաքյալները, ովքեր ղեկավարում են այդ եկեղեցին, ընդունակ չեն ժամանակակից իշխանություններին փոխարինելու և աշխարհի խնդիրները լուծելու:

- Մենք ևս ունակ չենք բոլոր առիթների համար խորհուրդներ տալ:
- Մենք գիտակցում ենք, որ մենք անկատար մարդիկ ենք, և երբեք չենք պնդում, որ մեր նախնիները անսխալ են եղել: Եկեղեցին ներողություն է խնդրում սխալների համար, որոնք արվել են, բայց մենք չենք կարող անցյալը փոխել: Այն ամենը, ինչ մենք կարողանում ենք անել, դա վստահեցումն է, որ արված սխալները այլևս չկրկնվեն, քաջ գիտակցելով, որ մենք անխուսափելիորեն այլ բան ենք անում ...
- Այն փաստը, որ մենք մեր հավատքի ուսմունքի մեջ համոզված ենք, մեզ չի խանգարում ճանաչել ինչպես այլ եկեղեցիների հոգևոր հարստությունը, այնպես էլ նրանց անդամների վաստակը:.

Վերջում ուզում եմ մի մեջբերում անել, որն ինձ շատ դուր է գալիս: Դորոթեան Գազայից՝ մի վանական, ով 16-րդ դարում ապրում էր Պաղեստինում, գրել է. ,, Հոգիները համեմատելի են պտղատու ծառերի հետ: Երբ այդ ծառերը շատ պտուղներ են ունենում, ծանրությունից նրանց ճյուղերը կռանում են գետնին: Դրան հակառակ, այն ճյուղերը, որոնք պտուղներ չեն ունենում, վերև են բարձրանում: Կան ծառեր էլ, որոնց ճյուղերին քարեր են ամրացնում, որպեսզի ստիպեն, որ նրանք թեքվեն, որպեսզի պտուղներ տան: Նույն ձևով է նաև հոգիների պարագայում: Երբ նրանք հնազանդ են, կրում են հարուստ պտուղներ, և ինչքան շատ են կրում,ավելի հնազանդ են դառնում,,: / Դորոթեան Գազայից. 1-ից -16-դ դար, 1963թ, թարգմանված ֆրանսերենից/:

,, Նույնպես և դուք, երիտասարդներ, հնազանդ եղեք ծերերին, բոլորդ միմյանց հանդեպ խոնարհություն ունեցեք, քանի որ Աստված հակառակ է ամբարտավաններին, իսկ խոնարհներին տալիս է շնորհ: Խոնարհվեցեք Աստծո հզոր ձեռքի տակ, որպեսզի ժամանակին նա մեզ բարձրացնի,, / Պետրոս 5. 5,6/:

Խմբագիր
Հրատարակիչ՝ Ժան – Լյուք Շնայդեր, Իուբերլանդշթրասսե 243. 8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ հրատարակչություն ՓԲԸ, Ֆրանկֆուրթեր շթրասսե. 233,63263 Նոյ- Իզենբուրգ/ Գերմանիա
Հրատարակիչ՝ Փեթեր Յոհաննինգ

Նշխար 100 տարի՝ երբ նշխարամանը մոտեցվում է

Լուսանկարը՝ Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի ՆԱԵ կենտրոնական և դաշնային արխիվ / Զինվորները իրամատում/

Երեք կաթիլների համար տարին հոբելյանական է՝ 1917 թվականին Չարչարանաց ուրբաթին գլխավոր առաքյալը տոնեց իր առաջին պաշտոնական ժամերգությունը միայն նշխարով՝ առանց գինով լի բաժակի: Ինչն այսօր շատ նորմալ է, 100 տարի առաջ անհրաժեշտություն էր: Ինչու՞:

,, Այսօր մենք Սուրբ Ընթրիքի ճաշակման փոփոխություն ունենք,, ,- այս խոսքերով գլխավոր առաքյալ Հերման Նիհաուսը Բիլեֆելդում / Գերմանիա / հայտարարեց նոր շրջանի սկիզբը : Մինչ այդ, ընդունված էր հացը որպես նշխար ընդունելը, իսկ գինին՝ բաժակից խմելը: Հիմա գինին միայն կաթիլների ձևով է ներկայացված նշխարի վրա:

Երկու խնդիր…

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում գինի հազիվ էր հայթհայթվում: ,, Մենք կիսով չափ դիմում էինք ջրի օգնությանը, բայց դա էլ չէր բավականացնում,, ,- ասում էր գլխավոր առաքյալը այդ պատմական ժամերգության ժամանակ:

Խոլերա, տիֆ, տուբերկուլյոզ– համաճարակի վախը հիգիենան դարձրել էր հիմնական թեմա: ,, Բաժակն ամենքի խմելուց հետո պետք է մաքրվեր սրբիչով և ծառայողների կողմից պտտվեր: Բոլոր դեպքերում նկատվում էր, որ բաժակը խմողների կողմից էլ է պտտվում, և շատերը հազիվ հպվում էին բաժակին՝ առանց շրթունքները կպցնելու:

… և երեք լուծում

Երեք լուծումներ քննարկվեցին Նորառաքելական եկեղեցու 1917 թվականի մարտի 25-ի շրջաբերականի առաջնորդող հոդվածում:

Առաջինը՝ օգտագործել առանձին փոքր բաժակներ, ինչպես տեղի ավետարանական եկեղեցիներում:

Բոլոր դեպքերում ավել կամ պակաս շքեղ գավաթները Սուրբ Ընթրիքի տոնակատարության ժամանակ դիրքերի տարբերության համաձայն տարբեր տեղերում էին դնում, որից պետք է

խուսափվեր՝ խիստ կրոնական տեսանկյունից ելնելով:

Մյուսը՝ նշխարները փղոսկրե պատառաքաղով թաթախում էին գինու մեջ և տալիս հավատքի քույր-եղբայրներին, ինչպես Հոլանդիայի համայնքներում: Բայց նշխարներն արագ փափկում էին: Նրանք կպչում էին ձեռքից, որը ևս հիգիենիկ չէր:

Մնաց միայն մեկը.,, Պատերազմը մեզ որոշ բաներ սովորեցրեց,,:

Կարիքը որպես ուսուցանող վարպետ

1915 թվականի հոկտեմբեր, Ֆրանսիական ռազմաճակատ. իտալական տարբերանշանով զինվորը դաշտային փոստով մի նամակ է ստանում ,, սիրելի գլխավոր առաքյալից Սուրբ Ընթրիքի հետ միասին: ,, Մենք խնդրում և աղաչում ենք, որ ոչ միայն դուք, այլ մյուսներն էլ ճաշակեն, դրանում դրված են Հիսուսի գործերը,, ,- գրված էր նամակում: ,, Ես այստեղ, իմ ծողոտե ճամբարում, ուրախանում եմ երեխայի նման,, ,- ձևակերպված էր նամակի պատասխանում, որը լույս է տեսել Նորառաքելական եկեղեցու 1916 թվականի հունվարի շրջաբերականում:

Սկզբում նշխարները դրվում էին գինու փոքր շշերի կողքին: Սակայն, դրանք սիգարետների նման անհետանում էին գաղտնի բացված պարկերից: Պատերազմի բռնկումից անմիջապես հետո, 1914-ին եկեղեցու ղեկավարությունը զինվորներին տալիս էր համակցված նշխար: ,, Մենք օծում ենք գինով լի գավաթը և նշխարները, ապա նշխարների վրա օծված գավաթից գինի է կաթեցվում,,:

Խոսքը քանակությանը չի վերաբերում

Արդյո՞ք Սուրբ Ընթրիքը կատարվում է այնպես, ինչպես Հիսուս Քրիստոսն է այն հաստատել: Գլխավոր առաքյալ Նիհաուսի պատասխանը համեմատությունն էր մկրտության հետ.,, Կան համայնքներ, ովքեր ամբողջովին սուզվում են ջրի տակ, մեզ բավականացնում է ջրով ցողելը,,: Այս առումով Չարչարանաց ուրբաթի ժամերգությանը նա կատեգորիկ վկայակոչում է Մարտին Լյութերի դավանաբանական խոսքը.,, Ջուրը չէ, անշուշտ, անում, այլ՝ Աստծո խոսքը, որը ջրի հետ և ջրի մոտ է,,:

,, Եթե հազարավորները գոհ են գինու կաթիլներ կաթեցնելուց, մենք էլ ենք գոհ,, ,-շեշտեց եկեղեցու ղեկավարը Չարչարանաց ուրբաթի ժամերգությանը: ,, Հացի վրա կաթեցվում է երեք կաթիլ գինի այնպես, որ այն տեսանելի լինի,,: Դա սկզբում կարևորվում էր միայն իր աշխատանքային շրջանակի համար՝ որպես առաքյալ: Բոլորի համար պարտադիր լինելը պետք է հաստատվեր միասնական որոշումով, որը կայացավ 1919 թվականի աշնանը շրջաբերականի միջոցով:,, Առաքյալների որոշմամբ այն արդեն ամբողջականորեն հաստատվեց,,:

ներքևում ձախ՝ դաշտային փոստի նամակը նշխարով և գինու փոքր շշերով
ներքևում աջ՝ առաջին համաշխարհային պատերազմի զինվորները խրամատում՝ մարտի դադարի պահին ո

Նախատեսում

02.07.2017	Հոմաբայ / Քենիա
14.07.2017	Լուբումբաշի / Կոնգոյի ԴՀ
16.07.2017	Լուբումբաշի / Կոնգոյի ԴՀ
23.07.2017	Բարսելոնա / Իսպանիա
30.07.2017	Ցեփերնիկ / Գերմանիա
05.08.2017	Նաթալ / Բրազիլիա
06.08.2017	Նաթալ / Բրազիլիա
19.08.2017	Լուենա / Անգոլա
20.08.2017	Սաուրիմո / Անգոլա
17.09.2017	Դենիա / Իսպանիա
24.09.2017	Մելբուրն / Ավստրալիա
25.09.2017	Մելբուրն / Ավստրալիա
28.09.2017	Վեվակ / Ավստրալիա

New Apostolic Church
International